## ԺԳ.

# ՕՐՀՆԱՆՔՆԵՐ.

## I.

### Այլաօկերտի բարբառով.

Աստուած արև տայ,
Աստուած բարի բախտ տայ,
Աստուած դուռդի բաց էնայ,
Աստուած էլ յէվելցու,
Աստուած արեդի կանչըրցու,
Աստուած հոգին լուսաւորայ,
Աստուած ուրին դըրախտի փայ էնայ,
Աստուած ուր մեղքեր յիրես չտայ,
Աստուած ուր դատաստան քաղցր էնայ,
Աստուած չէն ու լէն պայյու,
Աստուած ջուխտկներդի պայյա,
Աստուած սրտովդի տայ,
Աստուած անէդ պակաս չէնայ,
Աստուած քու խէր խապուլ էնայ,
Աստուած քու ձգերու խիղճն իչկայ,

Բարձդի բարին։
Բարով ու խերով կայնիս։
Գդլով ցրուիս, չերփով ժողուիս,
Գետի աւազի ումր տայ քզի,
Գլխաւորդի ալրի,
Գլխաւորէդ խերիս,
Եօթն օրդով սեղան նստիս,
Թփուիս, խերիս,
Խաչէդ առնիմ,
Ծլիս, ծաղկիս,
Կանչընաս, հոգով ուրախնաս,
Հազար յըմալ կտըռտիս։
Հալալ կաթ ուտիս,
Հայր Աբրահամու քօք նստիս,
Հօրով, մորով ջօջընաս,
Ձեռքէդ անհատ էղնի։

Մէկ ու ճար իս, էրկէն արև էղնիս։
Մէկ տաս, հազար գտնիս։
Մէկդի հազար էղնի։
Նամարտի մունթեն չէղնիս։
Շատ զատիկներ տեսնիս։
Շատ ապրիս։
Շնորհաւոր էղնի։
Ուրախութենով զատիկ էղնի,
Ուրախութենով խոնչախ էղնի։
Ուրախութենով քառասունք բռնիս։
Ուրախ օրեր տեսնիս։
Պատիւովդի մնաս։
Ջոջընաս։
Սահակայ, Յակոբայ օրհնութեն
էղնի։
Սիմոնայ ծեր էղնիս։
Սիմօն ծեր էղնի։
Տղիդ կանանչ կարմիրը տեսնիս։
Ցամաք յաջքով հող յիչնիս։
Ցաւերդի թեթըւնայ։
Քարին էրթաս, կանանչ դառնայ։
Քու դուշման մեռնի։
Քու դուշմնի յաչք ֆոռնայ։
Քու հոգուց խեր տեսնիս։
Քու մուրազին հասնիս։

Ցերկնավզիկ,
Թեթուաջրիկ
Ջաղամաթի քունը քզիկ։

---

## ԳԻՒՂԱՑՈՒ ԿՏԱԿԸ.

Աստու օխնիքը վըր ձըզի էղնի։
Աստուած ձըզի խեյք տայ։
Մնաք տունուի, տուն չահիք։
Մէկ ցանէք, հազար վերցնէք։
Քարի վրէն էրթաք, կանանչ դառ-
նայ։
Ձեր իգբալ կտուր դառնայ։
Ձեր սեղան փռուկ էղնի։
Եօթն որդւով սեղան նստիք։
Դուշման վըր ձըզի չուրախանայ։
Ձեր ֆըրկէն ձեռ չկարճըցուցայ։
Խըլխի մալին դման չէնէք։
Իրարու պատիւ պահէք։
Մէկ հատ ձըզը ջոջ խասկըցէք։
Իրարու խօսքով էղիք։
Դուշմընաքամ չէլիք։
Ձեր կնկըտոց ականջ չէնիք։
Կնիկ օր կայ, էլ օղլուշա, բէբադդ
ա։
Խըլղի զիան չէնէք։
Եզներուն, գմըշներուն մուղաթ
կեցէք, օր հաց ուտէք։
Օտից չընկըցուցէք, օր վաղը չըն-
կնիք խըլղի դուռ ու փողան։
Ցըմալ բանցուցէք օր հին ու նոր
խառուի յիրար։
Ձեր լէք ֆասան չզարնէք, թափէք։
Աղքատ գուգոյ ձըր տուն, դար-
տակ մի դարձուցէք։
Դրկեցներու հետ աղէկ էղէք։
Էն օր ձզի աւրելու կը դառի, դու
չդառիք զէնի աւրելու։
Ծանտր նստէք, զիտր գաք։
Տեղ մը կերթաք, ցածր նստէք։
Ամենու պատիւ ուր ձեռն ա։
Դուշման օր գայ ձեր տուն, դար-
տակ մի դարձուցէք։

# Չ.

### Վանայ բարբառով.

Ախթամարայ սուրբ խաչ քե փորցանաց փռթուցի։
Ամեն ճառից, ամեն կրակից պրծալից ազատ մնաս։
Անմեղ խըխչտակ տըղառնաս։
Աստուած իշալա մէկդ խազար անի։
Աստուած կըլըխներաց պակաս չանի։
Աստուած քե զաւալ չտայ.
Աստուած ջանիդ սաղութեն տայ։
Աստըծու մատ խէտ քե էլնի։
Աստըծու չնոխք քիզնից չը պայսի։
Աստըծու օխնիթք առնես։
Աստուած ուլ ձեռ քիզնից չը վէրուցի։
Աստուած քըռ պանին, կըռուծին աճողութեն տա;
Աստուած քըռ կանանչ արև պըաշխի։
Աստուած քե քեաղցը։
Աստուած քե քեաղցրէկ արքավութեն տա,
Արնէ քըռտինք թըափես, ճալալութենով ուտես։

Բըկլոխ չէլնես։
Եարա փարա չը տխնաս։
Եօթնականի չնոխք մէյն քե էլնի։
Եօթ ըսկուն կըռուտես։
Էրկէն արև էլնես։

Թըաջըրեցդ ըալիր տաշտիցդ խաց չը պայսի։
Թըաք ու պսակիդ խասնես։
Թոռան թոռւէ տիսնաս։
Թքես վեր օձու, օձ խալի։
Ինչ պըարին կամենաս, Աստծով կատարուի։
Իշալա արեւուցդ խեր տիսնաս։
Լաճ—տղի տէր էլնես.
Լըոս կերէզման խամբիւրես։

Խաթուն տիրամէր կեա քե էօգ։
Խալիւորնաս չինկըրվըննես։
Խանգիստ ցաւիկ թեթրիկ մախիկ կըն'դընես։
Խէր Ապըեխամու օխնիտք վէրէդ էլնի։
Խնազանդ որդիւ տէր էլնէս։
Խոգէզվանք քե ըազատի։
Խոքիդ մէջ լիւսիւն էլնի, օղորմած։
Խօրդ մօրդ պըալի իշտակ տըառնաս։

Ծէնդ էրկրէ էրկիր փըռուի։
Կանաչ արեւուցդ խէր տեսնաս։
Կարաչի կնկեան ճառից փախս մնաս։
Ծոյանաս, խօրդ մօրդ պատիւ կիգնաս։
Մայր Աստածածնա օխնիտք առնես։

---

*) Գրի առած է Հայկակ Տ. Մկրտչեան. Վանայ կեդրոնական վարժարանը աւարտած.

Մարդ ալըես մարդ մնաննա:
Մնաննեմ պըաժիդ·
Մէյ տաս, խազալը առնես:
Մէյ ցաննես, տաս քեաղես·
Մուրազ Աստըծուց առնես:

Նամարդի մուխթէջ չէլնես·
Նեղութեն չախնաս:

Ոտնէդ չուամ կըլէօխ օխնիթքով
ըլցուես:
Ումուդդ աստուծուց չը կըդըես·

Պանիդ կեռածից ըաճողութեն էլ-
նի:

Պըարի կհարուն տխնաս·
Պըարութնով մնանես·
Պըարի օրինակ տըառնաս·
Պըարով վայելես·
Պխւզին կէրի չը տըառնաս:
Պըտուղ մը խունք էլնես·

Սատանէն քե չը խէծնի·
Սատանի խաղալիք չէլնես·
Սըբ արդըկից կը խնդրեմ կէչ օր
չը ախնաս·
Սըբ Քևոըրթայ չնոխքով փըկուես·
Սիմոն ծեր էլնես·
Սիվտայ մաւրուս էլնես·
Սըտիդ պարն ուտես·
Սըտիդ կհօրա կընտըննես·

Վարադայ սըբ Նիշան քե պախի:

Տարբէ տարի աւելնաս·
Տաս տըարք ընցուցես·
Տեղըն աբեգակ քե օխնի:

Փխւթկի սըբ Կէվորք քե խասնի·
Քըռ տան օճախ չընցընի:
Քիչ ուտես, չատ խնայես:

## Յ.

### Ցիվրիկցոց բարբառով *).

Ալլի, եշիլլի (կարմիր—կանանչ) հարս ըլլաս:
Աստուած աւեդ պահէ·
Աստուած իմ հոգին առնէ, քու վատ օրը չի տեսնեմ·
Աստուած չեռ—ոգեյա մարդէն, պահէ:
Աստուած քեզ դուշման պուչաղիէն սւահէ·
Աստուած օճաղդ չէն պահե·
Դալար մնաս·
Եօխսուլ օրեր չի տեսնես·
Թագդ ու պսակդ պագնեմ·
Ջուխտ—չուխտ հարսներու տէր ըլլաս·
Սուրբ Յակոբ սև ձիաւոր խաբսմնիդ ըլլայ·
Սըտիդ մուրադին, հոգուդ սիրածին հասնիս·

*) Ասած է Յակոբ Սրապեան·

## Գ.

**Մշոյ բարբառով *).**

Հայրը կօրհնէ պանդխտութեան գնացող տղին.

—Ապօ, ես կերթամ ի ստամբօլ.

—Ցօլին կերթաս, լաօ:

—Ապօ, մենք հիրք է գիտայ նեղուսէն քաշինք. Մըր բարե-կըմներ գիգան զմըր տուն կը տեսնան դարտակ. իմ սրտ ամօթու կերտայ դուս, մէկ կտոր հաց չէղնի օր գնէ ուրանց յառէջ.

—Լաօ, օր միտքդի դրած իս, գնա.

—Լաօ, որ կերտաս Աստուած հըա քզի էղնի:

Գինաս, էդ Ստամբօլ էրմիշ էրկու միլաց կայ, ամէն մէկ մէկ բնուտենին է, զմարդ կը խապին. դատէցնին, յետ հեղ չոր տաղտը-կի վրէն կը նստեցնին. Մուխեաց կէնաս. չխապուիս, չէրտաս, տեսնաս Ստամբօլ, չուտ բէ չուտ մտնաս զմզի, ըընգնաս գէշ բա-ների հետ, մտնաս գքու մոմ. գքու պապ, դտան ճիժ. Ջեղնի խա-պին գքզի էդ անհոգի թուճրներ, ուտին գքու ճալալ դատում ու քըտինք.

Լաօ, լուսուն գնա, Աստուած քու հետ էղնի, Ամօու հրեշտակ-ներ քզի պահապան էղնին, գիշեր ցերեկ Աստուած ամպհովանի էղնի քու վրէն. էն է, իմալ օր Աստուած Մովսէսի էներ. Իմ տուած ամակ քզի ճալալ էղնի, կօրշնիմ գքզի օր, գքզի ափարձ պահէ:

Սուլթան Սբբ Կարապետ քզի օգնական, պահապան էղնի. Սբբ Սարգիս, Սբբ Գէորգ քզի հըմալ հասնին, էմալ՝ ձէթ ի ճրագլուս, ինչ խրեր որ ավաղ կայ մըր Թըթրոյ խաճդակ, էն խրեր Աստծու օրշ-նիթք գքու վրայ թափի.

### Մայրը կօրհնէ

—Լաօ, կերտաս, մայր Աստուածածին բարեխօս էղնի, Քրիստոս քզի վատ օր չտայ.

Նեղ օրէն, ջրէն, յէլման գետէն, գէլ դազանէն. վատ յընկեր-ներէն, ծառօուռ մարդէն. անզգամ կընկնէն հեռու պահէ. Հալալ էղնի քզի իմ տուած ամակ. օր ինն ամիս գիշեր—ցերեկ նեղուտե-նով օր տըսերկու տարեկան էղար, տուի ճալալ կաթ, զնձի զըկեցի իմ բայն. յըմեն քզի կերցըցի. ճալալ էղնի, գնայ. հարկէ դու զմզի

*) Ասած է Սմբատ Տէր Ղեւոնդեան.

կը մոռնաս. դու, գքու Աստուած, չէրտաս գէշ ճանբաներ, քու կեանք ապսոս է, կեղնիս մըր յէրսին ծեծանք. կը բէրիս մըր աղգալաններին ամօթանք։

Քոյր.—Ախպէր, դու իմալ կը թողիս զմզի կերտաս Համբախ Ստամբօլ ուրեց զմըր էրկիր. մըր էրկըրի ջճելներ յըմեն գացին խարիպութենի մէջ մեռան.—Աղջի, դու ծուռ իս, ինչ կը զըուցիս։ Ապա չէրտամ, իմալ էնիմ, թանճիլեար յիգայ. տանէ զիմ պապ. ըռնէ, ծեծէ, էլ յօրէ կը մնամ սաղ, դու Ասսու կանչէ, օ ընձի փշում յաջողութեն իտայ, որ տարիմը զմըր պարտքեր իտամ, մըր բարեկըմներ խնդանան. մըր դուշմաճ հօռնայ։

—Ցըմալ է, ախպէր. դու գքու խօսքէն չդառնաս, Աստուած գքու կանանչ կարմիր արև պահէ, ջրի պէս յ՚րկէն արև էղնիս, ծլիս, ծաղկիս, բարով էրտաս. ցամաք աչքով յետ դառնաս. տեսնանք գքու թաքն ու պսակ, սուրբ Սարգիս հասնի քզի։ Բամ լէ կըսիմ, չըռըքի՞ս, կըսին որ Ստամբօլայ աղջիկներ յըմեն մարդու հետ կը զըրուցին. չեղնի դու լէ խապուիս ընոնց, իմալ Ամըխանի Մկրօն խապուէր է ընոնց լեզուին որ կարմիր դեղ կը քսին զուրանց էրեսներ. մոռցաւ զուրանց օճախ, խարիպ էրկրի մէջ կօրաւ։ Մընք քզի յըմալ խօրատ հօրօրտի մըր ճճֆուֆին աղէկ մարդու աղջիկը գտնանք քզի, հարի դու իգաս։

---

1) Մշօյ մօտերը «տեսնանք» կասեն. իսկ Զուխուրի կողմ «տեսնինք» կասեն։

# 5.

**Արծկէի բարբառով.**

Առաւօտ բարի լուսուն կելնիմ, աղօթք կենիմ ես խամար․

Աստուած տայ քե յաջողութիւն, ուժ կարողութեն.

Աստուած քեզի զօրուց, բօզուց ազատէ․

Աստուած քեզի քուրդ ու քուրց ազատայ:

Աստուած քու խետ եղի․ քու բանին, գործին յաջողութեն տայ․ չոր քարին էրթաս, կանանչ դառնայ քու յառէջ․

Առընծուն կը խնդրեմ, ջօջ—ջօջ գետեր քու յառէջ կանին․

Բարով խերով էրթաս, գեաս, քու ճժերուն տեսնիս․

Գէլ, գեազնի բերան քու յառէջ փակ եղի․

Դատածդ գօզու, բօզու, խաղի, մեյխանի չտաս․

Սրթամ սուրբ կանաչաւոր, քե ապով ճրագ վառեմ․

Սրթաս, սաղ սալամաթ գեաս քու ճժերու վերէն, լաօ․

Էն խելքով մարդ օ կերթայ, մարդ կերթայ, մարդ կուգեայ․

Էնպէս նստես կանես օ դուշմնին լեզուատեղ չեղնի․

Էնպէս չգեաս օ դուշման վեր քե ուրախանայ․

Իրէք տեսակ մարդ կայ աշխարք.—Որն իս դու․ Մարդ կայ չուն ա, մարդ կայ էշ ա, մարդ էլ կայ բնական խելք ունի․

Խէր տղին վատ չուզէր․ օ դու մեծի խօսք լսես, քու ոտ քարին չառնի, քու բան—գործ յաջողութենի մէջ կընկի․

Ձեռդ քսես դառնեմ չոր խոտ, կանանչ դառնայ․

Ծամխներդ չոր էղին:

Մէկ կովու օրթիկ կը խօստանամ Սըփ Կարապետու․

Մշու Սուլթան Սըփ Կարապետ քեզի քօմակ եղի․

Ցըմենն էլ քու ձեռ կիշկին․ տուն ու ջանի մեղք վըր քե չառնիս:

Շուն մարդ զաքի չան ճամըխով կերթայ․ էշ մարդ աշխրքէն գաթի բան չխասկընայ․ Էշ կերթայ, էշ կուգեայ․

Որ գեացիր, էկար, մէկ ալ քե խամար մատաղ կենեմ:

Սըփ Սարքիսին քե խամար իրեք օր ծոմ կը պախեմ․

Տուն ու ջանի մեղք քու վիզն ա, յէմալ էնիս մեղք քու վիզ չընկի:

Փութկի Սըփ Գէորգ քե ջան սաղութեն տայ, աշխատես բերես․ քու կնկան, քու ճժերուն պախես․

# 6.

### Արճէշի բարբառով.

## Օրհնանք ու խրատ պանդխտութեան դիմողին.

Որդին հօրը.—Ափօ, ես կերթամ դարիբ դուրբաթ էրկիր բանելու, էլ էս տեղ չեմ կանայ ապրուստ էնել, քու ձեռ կը պագեմ, ընձի օրչնա։

Մօրը.—Մարէ, մացի բարով, կաթ էմ կերել, ընձի օրչնա, քու կաթ հալալ էրայ ընձի, էղաւ օր ապրել կայ, մեռնել կայ. դարիբ էրկիր ա, գեացի, չդարձայ. Աստըծու ամանաթ քու խալս քեզի, ամանաթ իմ ճժեր քեզի, վերև ներքև դուն։

Եղբօրը.—Ախպէր, ամանաթ իմ ճժեր քեզի։—Ախպէր. մարէ, Ափօ. ամանաթ իմ ճժեր ձեզի. իմ ճժեր, ձեր խալս պախիք. ձեր յաչք վըր էդոնց էղի, խօրոտ իշկիք. ծուռ չնատին, կանին, ձեր ձեռ վըր էդոնց գլխուն պախէք։ Տուն ու տաւարին մուղաթ կեցէք, չեղի փէտնան, բան էղին, մեր տուն աւիրին։ Ձեր դըկեցներուն խեռ չդիպիք, աղէկ կառավարուէք, գեչութեն, վատութեն չնէք, ամեն վախս ձեր աղէկ խօսք խասնի ընձի։

Մայրը.—Աստուած օրչնի քեզի, լաօ, Աստըծու օրչնիթ վըր քե էղի, լաօ, բարով էրթաս, բարով գեաս. հիւի կենեմ, քեզնից, լա օ, չմոռնաս քու կերած կաթ, որ տեղ խասնես, վըրաղ գիր գրես։

—Էս իմ էրկու աչիչ վրէն, մարէ. քու ձեռքդ եմ պագեր։

—Բարեկամներ, դըկեցներ. դուք էլ գիտէք օր ես կերթամ դարիբ էրկիր, իմ տան մուղաթ կեցէք. իմ խօր ֆօմակ էղէք, պակսութեն բամ կեղի, աուէք, ես թեզ կը խասում ձեզի։—Երթաս բարով, գեաս բարով, դու անհոգ կեցի, մենք էլ մարդ ենք. մեր տան պէս քու տան կիշկենք. դըկեց էլ ինչ աւուր խամար ա. դու արխային գնա, քու ապուռով նստի, կանգնի, քու աղէկ ձէն խասի մեզի։

Մայրը.—Լաօ, կերթաս, քու ճժեր, քու կնիկ չմոռնաս, քու տուն ու տեղ չմոռնաս. մէղք էն քու ճժեր, քու կնիկ։

—Մարէ, ավալ դու սաղ մնաք. էրկէն աըև էղիք, ետքը իմ ճժերուն։ Ձեր էրկէն ձեռ Աստուած չկարճցու, դու սաղ մացէք, էդոց բան ղօլայ ա, ես ըսկի էլ չմոռնամ։ «մոռնամ կը ֆօռնամ»։

—Լաօ, քե հիւի կենեմ, թուխտ գրես. Աստուած յաջողայ փարայ մարայ դատեցար, ընձի մէկ ղաթ չոր բեր. քու կնկան, քու ճժկներուն։

Կինը.—Քա, դու որ կերթաս, մեզի մի մոռնար, յաչքդի վըր մզի եղի, քու ֆորփայ ճժերուն կիշկես, էդոնք մեզքէն, ես էլ կը մնամ քանճկիզար, ջնէլ ֆուլթաբ, ընձի չմոռնաս, գիր գրես, գնայ խասի մեղի, օսկու չարից—մարից էլ օղորկես, գնայ։

Քոյր.—Ախպէր, ղուրբան քե, ինչ կօղորկիս քու կնկան, չէ ես էլ քու քուրն էմ, ընձի էլ օղորկայ, գնայ, կօնտօրից մօնտորից։

Հայրը.—Լաօ, փարայ մարայ կընկլի ձեռդի, ընձի մէկ խատ սաֆօ առ. մէկ խատ էլ ֆիրմայի շալ, թէ շուտ բանի վրայ կընկիս, մեզի էրկու օսկի օղորկիս, օ մեր տուն կառաւորենք, մեր պարտք ու մարտք տանք. իտա վախտին մեր փողպատ չի բռնեն. որ չընկի ձեռդ էլ ա, տեսար օ աշխատանք չկայ, չընկիս խլխի դուռն ու փողան, շուտ կը դառնաս, կուգաս քու տան վրէն։ Թէ բան շատ կեղի, էսպւուն թուխտ կօղորկիս գնայ, քու պատիկ ախպէր ճամբխեմ, գնայ խասի քեզի։ Թէ փարայ դատաք, շուտ օղորկէք, գնայ։ Մեզի պակասութեն շատ կայ, մտախան չէնէք։

Ձեր խեղք, ձեր գլուխ պախէք, մտախան չէնէք ձեր տուն, մեր չէն տան անուն չաւերուի, մեզի տասը սոս կայ, տասը խատ էլ դուշման կայ, աղէկ չէղաք, դուշման վըր մեզի կը ծծղըցուք, օ աղէկ, էղաք, բարեկմներ կուրախանան, դուշման կը պատռի, կասեն.—Ֆլանճասի տղէկներ գնացին, էկան, աշխատանք բերեցին. պարտքեր տուեցին, եզ ու գոմէշ առան ուրանց։

Ահա, լաօ, Աստուծ իմ ումրից կտրայ, դնայ իմ տղէկներուն վրայ. լաօ, Աստուած տայ, յըմեն գեալս ձեր բարի անուն լսեմ. խայղ ասեն.—Էնպէս խոնարհ տղէք են, կաժեն մէկ մէկ աշխարք։

# 7.

**Թասնճի բարբառով *).**

Ապրիս, զօրանաս․
Աստուած աղբօրդ էրկէն յարև տայ․
Աստուած էրկէն արև տայ։
Աստուած հօրդ, մօրդ էրկէն արև տայ․
Աստուած խելք մտահան չէնէ քեզի․
Աստուած մէկդ հազար էնէ․
Աստուած տունդ անպակաս պահէ․
Աստուած պահէ քեզի․
Աստուած տայ, չխնայէ։
Աստուած քեզի պէս ավլաց տայ հօրն ու մօրը․
Արևդ ջրի պէս էրկննայ․
Աստուծոյ աչքը վրէդ էղնի ամեն հաղ․
Աստուծոյ բերնով օրհնըվիս։
Աստուծոյ գառն էղնիս․
Գէշ օր չտեսնիս․
Սօթ տղով սեղան նստիս։
Էրկէն արև էղնիս․
Ինչքան օր մալ ունիս, Աստուած էնքան էլ էվել տայ։
Ինչ որ սրտիդ մեջը կայ, Աստուած կատարէ․
Ջրի պէս յարևդ էրկէն էղնի։
Վատ օր չտեսնիս․
Տիւշմանդ մեռնի․
Տունդ յամեն անգամ էսման լաւ մնայ․
Տունդ չէն մնայ․
Օղորմի հօրդ հոգուն․
Օճախդ հաստատ մնայ։

Ղուրբան էղնիմ էն բերնին, որ կը խօսի․
Մեռնիմ գալածդ ճանբուն որ դու կս էկե․
Նանէն մեռնի էդ պստիկ բերնին։

*) Ասած է Երուանդ Վարդանեան․

## Ց.

**Վաղարշապատի բարբառով**

Ասու աչն ու խաչը վրէդ ըլնի.
Ասու աջիկն ու խաչիկ վրէդ ըլնի:
Աստուած արեդ երկարացնի.
Աստուած բալէդ քեզ բաշխի.
Աստուած բարի բաղդ տայ.
Աստուած բարի բաղդի արժանացնի:
Աստուած շատ տայ, աւելացնի.
Աստուած օճաղդ հաստատ պահի:

Բարձդ բարի.
Բարով մաշես.
Բարով, ուրախութենով տեղերդ հաւաքես.

Հալալ հաց ուտես.
Հացդ անպակաս ըլնի.
Հօր մօր օրհնութիւնը վրէդ ըլնի.

Ձեռքէդ անպակաս ըլնի.
Մէկի տեղ Աստուած հազար հասցընի.
Շաբաթ իրիկնով օղորմիս ուզեց, Աստուած օղորմի.
Շատերն էզպէս մաշես:
Շատ զատիկ տեսնաս.
Շատ տարիներ արժանանաս:
Ցլիդ կանանչ կարմիրին արժանանաս:
Քանց բարդի բարձրանաս, քանց փշատի կռանաս:
Քու սիրտն ու կօրտ տայ Աստուած.
Քրիստոս ուր սուֆրէն քու տուն թօթուէ:

## ԱՆԷԾՔ ԵՒ ՕՐՀՆԱՆՔ.

Ով կիրակի կերթայ ջաղաց,
Գիտայ տեսնի որդին թաղած,
Ո՞վ կը բանի Սուրբ կիրակի.
Ով կիրակի փէտ կը տաշի
Հոգին դժոխքին կը մաշի.
Ո՞վ կը բանի Սուրբ կիրակի.

Ով կիրակի էրան կանի,
Խեռ չարքերին սեյրան կանի,
Ո՞վ կը բանի սուրբ կիրակի:
Ով կիրակի կերթայ ջուր,
Կուգայ տեսնի որդին թուլ.
Ով կը բանի սուրբ կիրակի:

## Գ.

Ալի բէկլու գիւղի բարբառով․

Աբէլի մատաղն ըլնի․
Ասանից մէկին հազար առնես․
Աստուած օրհնի քեզ․
Աստուծոյ բերանը օրհնի քեզ․

Բարով աշխատանքիդ պտուղը ուտես:
Բարով կանաչ կարմիր կապես․
Բարով հասնես մուրազիդ․

Գաբրելական փողին արժանանաս:
Գոչայ սուրբ Գէորգը տայ մուրազդ․

Դալալագեազայ սուրբ խաչը օգնական, պահապան ըլնի որդոցդ․
Դրախտի փայ ըլնես․

Եօթը որդով սեղան նստես․
Իրար հետ հալիւորէք. պառաւէք․

Լաւի փայ ըլնես․

Աբրահամի մատաղն ըլնի․
Հոգիդ դրախտը էթայ․

Մէկդ հազար ըլնի․
Մէնձ աղէն կուանդ կաղնի․
Մի բարձի ծերանաք․

Որդկանցդ ձեռով հող մաննես․
Որդով, զաւակով ուրախանաս:
Որդոցդ պտուղը վայելես, ծլեն, ծաղկին, թև առնեն, թռնեն․
Ուր գնաս, Աստուած բանիդ. գործիդ յաջողութիւն տայ․

Ջոր քարի վրայ գնաս, առաջդ կանաչի․

Օջաղդ հայր Աբրահամի օջաղ ըլնի:
Օրհնած փողին արժանանաս․

# IO.

**Բrդակաճ օrհճաճfճեr.**

| | |
|---|---|
| Դլէ դէա չի կօs sը խօուազէ Խօsէ ճէաւ բիճէա: | Սիրտդ ինչ որ կուզէ, Աստուած անընդհատ թող կատարէ։ |
| Դիւ մar բըկrի, մասի բէա: | Դու օձ բռնես, ձուկ դառնայ։ |
| Դիւ cէաւ ճէառի, Խօsէ պէcիյե դէա ռօյի բըկէա· | Դու գիշերը գնաս, Աստուած քու առաջ լոյս անէ |
| Դիւ սէar կեավrէ ճէcf ճէառի, պէcէsա sէ ճեcյիճ բէա. | Դու չոր քարի վրայ երթաս, առաջդ կանանչ դառնայ։ |
| Լըճկէ դէա լէ կեավrէ ճէա՛ fեավէ· | Քու ոտք քարին չառնէ։ |
| Խօsէ բէarafեapէ մալէ sէա, բէազէ դէա, դավarէա դէա, զէ-sայ բըկէա: | Աստուած քու տան, քու ոչխարի, տաւարի շնորհքը աւելցնէ։ |
| Խօsէ բrայէ դէա cspռա բը ճելէ: | Աստուած քու եղբայր քեզ բաշխէ։ |
| Խօsէ մալէա դէա ավա բըկէա· | Աստուած տունդ չէն պահէ։ |
| Խօsէ լաւ կէ դէա ըcsըռա բը ճելէ: | Աստուած քու զաւկներ քեզ պահէ։ |
| Խօsէ դէա բը ճելէ: | Աստուած քեզ պահէ։ |
| Խօsէ դալա sաճկասիյէ ճէա՛ դէա sէ: | Աստուած քեզ նեղութիւն չտայ։ |
| Խօsէ դէավլաsէ դէա զէsա բը-կեա· | Աստուած քու հարստութիւն աւելցնէ։ |
| Խօsէ դէա ճէա՛ sէ cէarմի: | Աստուած քեզ ամօթալից չանէ։ |
| Խօsէ դէաusէ դէա դrէժ կօռs ճէա կէ· | Աստուած քու երկար ձեռ չկարճացնէ։ |
| Խօsէ էամrէ դէա դrէժ կէա· | Աստուած կեանքդ երկարացնէ։ |
| Հէar չի կօ դը խօուազի ըժ չի-ճառ ըռա բիա բէ պէcիա sէա· | Ինչ որ կուզես քու դլացու համար, գայ քու առաջ։ |
| Ծarճիզ փայդամբar էամrէ դէա դrէժ կէա: | Ծարճիզ մարգարէն (Ս. Գրիգոր Լուսաւորիչ) կեանքդ երկարացնէ։ |
| Ծիյա ճէառի, բէar դէա դէացs բէա· | Լեռ գնաս, քու առաջ դաշտ լինի։ |
| Ծիյա ճէacf ճէառի, բէar դէա ճեcիճ բէա· | Ջոր լեռ գնաս, քու առաջ կանանչ լինի։ |
| Սէar բէաճrէ ճէառի, բաճr ըժ-դէառա ռէ բsէա· | Ծովի վրայ գնաս, ծովը քեզ ճանապարհ տայ։ |
| Սէarէ դուժմըճէ դէա բը լէաճկէ դէա բէ· | Թշնամուդ գլուխը քու ոտից տակ լինի։ |